Ս. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ XIX Դ. 80-ԱԿԱՆ ԹԹ.

1882 թ. սեպտեմբերին բրիտանական զորքերը գրավեցին Եգիպտոսը։ Իր դիրքերն ամրապնդելու և անսահմանափակ տիրապետություն հաստատելու համար Անգլիային անհրաժեշտ էր հաղթահարել Եվրոպական տերությունների հակազդեցությունը, թուլացնել նրանց ներգործությունը և խափանել միջամտությունը Եգիպտոսի ներքին գործերին։ Անգլիացիների այս նպատակը հիմնավորված էր այն հանգամանքով, որ Եգիպտոսում դեռևս պահպանվում էր եվրոպական տերությունների համատեղ ազդեցությունը, որը արտահայտվում էր մի շարք միջազգային հաստատությունների գոյությամբ։

Ֆինանսական վերահսկողության հաստատումը և վարչակառավարման առանձին օղակների օտարերկրացիների ձեռքն անցնելը, այլ խոսքով՝ Եգիպտոսի եվրոպական տերությունների կիսագաղութի վերածումն սկսեց բրիտանական գրավումից շատ առաջ՝ Մոհամմեդ Սաիդի (1854—1863) և խդիվ Իսմայիլի (1863—1879) իշխանության տարիներին։ Արաբագետ Ն. Իվանովն իրավամբ գրել է. «Երկրում (Եգիպտոսում—Ս. Հ.) չկար արդյունաբերական մի ձեռնարկություն, մի բանկ կամ առևտրական խոշոր ֆիրմա, որ չվերահսկվեր օտարերկրացիների կողմից։ Նրանք էլ կոնցեսիաների կամ կապալների հիմամբ կառուցում էին երկաթուղիները, կամուրջներն ու նավահանգիստները։ Նրանց ձեռքին էին կոմունալ ծառայությունները, փոստ-հեռագրական կապի կազմակերպումը և այլն»[1]։ 1876 թ. խդիվ Իսմայիլի կողմից Եգիպտոսը ֆինանսապես սնանկ հռչակումից հետո ստեղծվեց Խդիվական պարտքի վարչությունը, որը վերահսկողություն հաստատեց եգիպտական կառավարության եկամուտների ու ծախսերի վրա և որին կառավարությունը վճարում էր պարտքերի տոկոսները։ Վարչության քննիչ-կոմիսարներ նշանակվեցին Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի,

Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի մշտական ներկայացուցիչները։ Նույն թվին, եվրոպական տերությունների անցկացրած դատական բարեփոխման միջոցով, Եգիպտոսում հաստատվեցին միջազգային դատարաններ։ Երկու տարի անց, եգիպտական ֆինանսներն ստուգելու նպատակով, ստեղծվեց Միջազգային հանձնաժողով և հաստատվեց կապիտուլյացիաների ռեժիմ։

Գրավման պահից Անգլիան բոլոր ճիգերն ի գործ դրեց նշանակալրկելու, իսկ հետագայում լրիվ լուծարքի ենթարկելու Եգիպտոսում պահպանվող միջազգային հաստատությունները, որոնց միջոցով եվրոպական տերությունները կարող էին վերահսկել երկրում բրիտանական իշխանությունների գործունեությունը։ Այդ նպատակով Սենթ—Ջեյմսի կառավարությունը, որպես արտակարգ լիազորներ, Եգիպտոս գործուղեց լորդ Նորտբրուկին, սըր Հենրի Դրումմոնդ-Վուլֆին և Էվելին Բերինգին (1892-ից լորդ Կրոմեր)՝ որպես դիվանագիտական գործակալ, ընդհանուր հյուպատոս և Եգիպտոսի փաստական կառավարիչ՝ 1883-ից ընդհուպ մինչև 1907 թ.։

1884-ին Նորտբրուկի առաքումը կապված էր Եգիպտոսում գոյություն ունեցող միջազգային դատարանների եթե ոչ ոչնչացման, ապա առնվազն նրանց բնույթը փոփոխելու և նրանցում ընդգրկված անգլիացի աստիճանավորների ազդեցությունն ուժեղացնելու ծրագրի հետ։

Միջազգային կամ խառը դատարանները հաստատվել էին Կահիրեում, Ալեքսանդրիայում և ալ-Մանսուրեում, ըստ որում վերաքննիչ ատյանը գտնվում էր Ալեքսանդրիայում։ Այդ դատարաններն էին լուծում քաղաքացիական բոլոր հայցերը, եթե կողմերից թեկուզ մեկը եվրոպացի կամ էլ Միացյալ Նահանգների հպատակ էր։ «Հանդես գալով իսկական դաճաճ մի թագավորություն»[2] նրանք չէին ենթարկվում անգլիական իշխանություններին։ Դատարանները վերածվել էին եգիպտական պարտքերի տոկոսների նվազեցումը խափանող խոչընդոտի, այլ խոսքով՝ պարտքերի լիկվիդացման օրենքի անթերի օգտագործման երաշխիքի և խդիվի ստորագրած հրամանագրերի օրինականությունն ընդունում էին այն դեպքում միայն, եթե դրանք կանխօրոք համաձայնեցված լինեին վերոհիշյալ օրենքը մշակած տերությունների ներկայացուցիչների հետ։ Միջազգային դատարանների հաստատման կանոնագրության հիմամբ վերաքննիչ ատյանը բաղկացած էր 4 եգիպտացի և 7 օտարերկրացի անդամներից, ըստ որում դատավոր-

ները նշանակվում էին Եվրոպական տերությունների կողմից։ Կանոնադրությունն ատյանին իրավունք էր վերապահում իր կազմը՝ անբավարար դտնելու դեպքում Եգիպտական կառավարությունից խնդրել ավելացնելու անդամների թիվը, միաժամանակ մատնանշելով այն անձնավորությունների, որոնց ինքն արժանավոր էր համարում[3]։ Նորտբրուկը շանաց գործող կանոնադրության մեջ մտցնել այնպիսի փոփոխություններ, որոնք այդ հաստատությունը կդրկեին իր անկողմնակալ և անկախ բնույթից։ Այդ փոփոխությունները վերաբերում էին երկու կետերի. դատավորների ընտրության ու նշանակման կարգին և դատախազական վերահսկողության հաստատմանը։

Առաջին կետով ենթադրվում էր հանձին Բերինգի փաստորեն անգլիացիների կողմից ներկայացվող եգիպտական կառավարությանն իրավունք շնորհել իր հայեցողությամբ ընտրելու օտարերկրացի դատավորներին, առանց նրանց ազգային պատկանելության հարցում որևէ կաշկանդման ենթարկվելու։ Միայն վերաքննիչ ատյանն էր, որ պահպանելու էր իր միջազգային հանգամանքը[4]։ Եվ սակայն, այս ծրագրով դատարանները չէին կարող իրենց անկողմնակալության բավարար երաշխիքները տալ, քանի որ նրա անդամները, նշանակվելով եգիպտական կառավարության կողմից, վերջինից լրիվ կախվածության մեջ էին ընկնում։ Անգլիացիներն իրենց հերթին հնարավորություն էին ձեռք բերում իրենց դրածոներին մտցնել դատակազմի մեջ։

Երկրորդ դրույթով ենթադրվում էր դատախազական վերահսկողությունն ու իր պաշտոնատան դատական պրիստավների բաժանումքն հանձնել արդարադատության նախարարի անմիջական ղեկավարմանը։ Այս կապակցությամբ Կահիրեում ռուսական գլխավոր հյուպատոսության ներկայացուցիչ Ա. Կոյանդերը արտաքին գործերի մինիստր՝ Ն. Կ. Գիրսին հասցեագրված իր զեկուցագրում դրում էր.. «Օտարահպատակների շահերի տեսակետից այդ փոփոխություններն անցանկալի են, քանի որ դատական պրիստավների անմիջականորեն մինիստրին ենթարկվելու դեպքում (ինչպես ներքևում կտեսնենք, արդարության նախարարին որպես խորհրդական կցվում էր անգլիացի մի աստիճանավոր,—Ս. Հ.) դատարանները հնարավորություն պիտի չունենան հետևելու իրենց վճիռների ճշգրիտ և անկողմնակալ գործադրմանը։ Պետք է պահպանվի տերություններին վերապահված իրավունքը՝ դատախազի կողքին ունենալու իրենց ազգությունից մի տեղակալ, որպեսզի ապահովվի մեղադրող և հետաքննող իշխանությունների գործողությունների ճշտությունը՝ հատկապես եթե դատարաններին արտա-

սահմանյան հպատակների նկատմամբ քրեական իրավազորություն է տրվելու[5]։ Այնուամենայնիվ, առաջին խոշոր զիջումը կատարվեց վարչապետ-Ռիազի կողմից. անգլիական ներկայացուցիչը Լոնդոն տարավ մինիստրության կողմից մշակված նախագիծն այն փոփոխությունների, որոնք Մեծ Բրիտանիան կցանկանար մտցնել միջազգային դատարանների կազմակերպման մեջ[6]։ Ռիազը մտադրվել էր Լոնդոնի կողմից հաստատվելուց հետո միայն այդ նախագիծը ներկայացնել մյուս տերությունների քննարկմանը, որոնք մասնակցություն էին բերել Եգիպտոսում միջազգային դատարանների հաստատմանը։ Նշանակում է, որ միջազգային բնույթ ունեցող մի հարցում եգիպտացի մինիստրները չվարանեցին խոնարհվել անգլիացիների ցանկությունների առաջ և ընդգծել երկրում նրանց գերակշռությունը։

Այնուհետև անգլիացիները ճիգերն ուղղեցին տեղական դատարաններն իրենց ազդեցությանը ենթարկելու նպատակին, վերջինս լուրջ սպառնալիք ստեղծեց գոյություն ունեցող կապիտուլացիոն ռեժիմի և միջազգային դատարանների համար։ Նրանք կարողացան հասնել այն բանին, որ տեղական դատակազմի մեջ նշանակվեցին երկու անգլիացիներ։ Այս կապակցությամբ Ա. Կոյանդերը նշում է. «Անծանոթ լինելով Նապոլեոնի օրենսգրքին և նույնիսկ Եգիպտոսում վարվող արդարադատության սկզբունքներին, որոնք դրված էին տեղական ատյանների կազմակերպման հիմքում, նոր խորհրդականները հազիվ թե ի վիճակի լինեն ղեկավարելու իրենց ծառայակիցների գործունեությունը»։

1889 թ. ապահովելով երկու անգլիացիների նշանակումը տեղական վերաքննիչ ատյանի կազմում, բրիտանական կառավարությունը 1890 թ. պնդեց նաև իր մի երրորդ հպատակի նշանակման վրա։ Նույն թվին անգլիական կառավարությանը հաջողվեց նաև արդարադատության նախարարությունում որպես ժամանակավոր խորհրդական նշանակել Ջոն Սքոթին, որը Հնդկաստանում վարել էր միանձնյա վերաքննիչ դատավորի պաշտոնը[8]։ Այնքան, որքան Եգիպտոսում գործող դատավարման կարգը քիչ ծանոթ էր անգլիական իրավագետներին և միաժամանակ զգալի խոչընդոտ էր օտարերկրյա մրցակիցների միջամտությունները խափանելու ճանապարհին Սքոթի նման փորձառու իրավաբանի նշանակումը դրսևորումն էր անգլիացիների ցանկության՝ եգիպտական դատարանները իրենց գաղութներում գոյություն ունեցողների օրինակով հիմնական վերափոխության ենթարկել, հեռացնելով անգլիական օրենքներին և սովորություններին անգետ մյուս բոլոր օտարերկրացիներին։

Սքոթն իր պաշտոնավարման առաջին իսկ օրից արդարադատական պաշտոնատան իսկական տերն ու տիրակալը դարձավ, քանի որ Եգիպտական մինիստրության գլխին ձևականորեն կանգնած մարդիկ ո՛չ բավականաչափ գիտելիք, ո՛չ էլ կամք և ընդունակություն ունեին իրենց կարծիքն ու տեսակետը անցկացնելու և պայքարելու անգլիացիների ամենաղոր ազդեցության դեմ։ Մի տարի անց Սենթ-Ջեյմսի կառավարությունը պահանջեց Սքոթին նշանակել Եգիպտոսի արդարադատության մինիստրությանը կից արդեն մշտական խորհրդական[9]։ Այդ օրինակ պահանջներն սկզբում տեղական կառավարական շրջաններում խիստ, հաճախ ոչ անկեղծ դժգոհանք առաջ բերեցին։ Միայն հայտարարեց, որ ավելի շուտ հրաժարական կտա, քան թե կստորագրի նման նշանակման հրամանագիրը ու նույնիսկ մերժեց ընդունել բացատրվելու համար իր պաշտոնատանը հայտնված Սքոթին[10]։ Սակայն այդպիսի վերաբերմունքը չշփոթեցրեց Բերինգին։ Շրջանցելով այդ հակառակամտությունը, նա միևնույն պահանջով դիմեց խդիվին։ Մեհմետ-Թաուֆիքն ըստ իր սովորության ենթարկվեց գլխավոր հյուպատոսի կարգադրությանը։ Հրամանագիրն ստորագրվեց 1891 թ. փետրվարի 3-ին և «ալ-Վակաի ալ Մըսրիյյա» պաշտոնաթերթում հրապարակվեց մինիստրական որոշման հետ, որը Սկոթի նախագահության ներքո հաստատում էր նախադատ ատյանների գործունեությունը վերահսկող, մի մարմին՝ անդամակցությամբ տեղական դատարաններին կից բելգիացի գլխավոր դատախազի, ներքին գործերի մինիստրության իտալացի իրավախորհրդատուի և վերոհիշյալ անձնավորությունների կողմից ընտրվելիք դատախազության երկու անդամների[11]։ Այդ կոմիտեի կազմում չընդգրկվեց արդարադատության մինիստրության ազգությամբ ֆրանսիացի իրավախորհրդատուն։ Վերջինիս բացորոշապես զանցառումը ընդունված որոշման դեմ հասկանալիորեն առաջ բերեց ֆրանսիական շրջանների դժգոհանքը։ Ֆրանսիայի ներկայացուցիչ դը Օբինյին հայտարարեց, որ իր կառավարությունը բողոքում է հօգուտ մի այլ տերության ֆրանսիական իրավունքների ոտնահարման դեմ, ըստ որում միաժամանակ պահանջեց կասեցնել խդիվի հրամանագրի գործողության մեջ դրվելը[12]։ Խդիվը մերժեց Ֆրանսիայի բողոքը։

Բացի դրանից, արտաքին գործերի մինիստր Զուլֆիկար փաշան ապրիլի 28-ին հրապարակեց № 365 շրջաբերական-հուշագիրը, որով կառավարությունը Եգիպտոսում եվրոպական բոլոր ներկայացուցչու-

թյուններից խնդրում էր միջնորդել իրենց ղեկավարների մոտ՝ հավանություն տալու հուշագրին կցված հրամանագրին, որը վերաբերում էր Ալեքսանդրիայի վերաքննիչ խառը ատյանի կազմում 5, 8 կամ 9 անգլիացիների հաստիքային անդամ նշանակելուն և խառը դատարանների շրջանակներում անգլերենը դատավարման լեզու հայտարարելուն[13]։

Սքոթի Եգիպտոս հրավիրման պահից խդիվի կամ նրա մինիստրների կողմից անգլիացիների պարզորոշապես բացահայտված կամքին ու ցանկությանը որևէ լուրջ դիմադրություն ցույց չտրվեց։ Օտար տերությունները ցանկության դեպքում կարող էին Սկոթի նշանակման դեմ բողոքի օրինավոր հիմքեր գտնել։ Այդ աստիճանի ազդեցիկ մի պաշտոնում անգլիացու ներկայությունը խախտում էր ինչպես նախկինում գոյություն ունեցած կարգը, այնպես էլ դատական բարեփոխումներին մասնակցություն բերած բոլոր պետությունների դիրքի և ազդեցության հավասարաչափության սկզբունքը։

Մեծ Բրիտանիայի կառավարությունն այդպիսով հող էր նախապատրաստել երկրի գերագույն իշխանությունը փաստորեն իր ձեռքը վերցնելու և միաժամանակ եգիպտական դատարանների գործունեությունը մրցակից օտարերկրյա ամեն մի միջամտությունից կատարելապես զերծելու համար։ Բերինգը Կոյանդերին ասում էր, որ 1894 թ. կառավարությունը լուծարքի կենթարկի խառը դատարանները, եթե նրանց գործունեության երկարաձգված ժամկետի ավարտի կապակցությամբ իր ներկայացնելիք նոր պայմանները տերությունների համաձայնության չարժանանան[14]։

Անգլիացիների բացահայտ ամենաշտրությանն մյուս գլխավոր խոչընդոտը Եգիպտոսում գործող կապիտուլյացիաներն էին, որոնք երաշխավորում էին օտարահպատակների անձեռնմխելիությունն ու տեղական դատարանների իրավասությունից զերծությունը։ Արդարադատության մինիստրության անգլիացի խորհրդական Ջոն Սքոթի իրավասությունները տեղական դատական հիմնարկների վրա տարածումն, ահա, սպառնալիք էր կապիտուլյացիաների ռեժիմի համար։ Այդ ռեժիմի աստիճանական վերացման մյուս միջոցը հանդիսանում էր հրապարակումը պարտադիր բնույթ ունեցող այն որոշումների, որոնք եգիպտական կառավարության կողմից մշակվել էին օտարահպատակների համար և որոնք հավանություն էին գտել Ալեքսանդրիայի ատյանի անդամների անգլիացիներին նվիրյալ մեծամասնության կողմից։ Ֆրանսիայի դիվանագիտական ներկայացուցիչ մարքիզ Ռեվերսոն փոր-

ձևը տերությունների կողմից ընդունված շրջաբերականի Դ հավելվածը խմբագրել այնպես, որ օտարահպատակների համար պարտավորիչ դառնան միայն այն վճիռները, որոնք կընդունվեն ատյանի առանց բացառության բոլոր անդամների միաձայնությամբ։ Եվ սակայն Ֆրանսիային չհաջողվեց հասնել հավելվածի վերախմբագրմանը։ Կոյանդերի խոսքերով՝ «1889 թ. տերությունների կողմից առանց որևէ նախապայմանի Դ հավելվածի ընդունումը եղավ մի մեծ սխալ, որն օտարահպատակների դեմ անգլիացիների ձեռքը տվեց մի շատ վտանգավոր զենք»[15]։

Եգիպտոսում միջազգային ազդեցության վերջին հենարանը Պարտքերի վարչությունն էր։ Նրա և Եգիպտական ֆինանսների ստուգման Միջազգային հանձնաժողովի դեմ Դրումմոնդ-Վուլֆի և Բերինգի կողմից ձեռնարկվեց մի ամբողջ արշավ, որի նպատակն էր ստվերել այդ հիմնարկների նշանակությունը։

Օտարերկրյա վարկատուներին Եգիպտոսի մեծագումար պարտքերի և երկրին եվրոպական տերությունների ընձեռած հովանավորության հետևանքով, եգիպտական ֆինանսների վիճակը անգլիական տիրապետության հաստատման ճանապարհի ամենադժվարին տեղամասերից մեկն էր։ Այն եվրոպական տերություններին հնարավորություն էր տալիս պահանջելու տվյալ հարցի վերաբերյալ միջազգային ստուգման անցկացում, ցույց տալու անգլիական վարչական սիստեմի սնանկությունը և դրանով իսկ զգալի հարված հասցնելու բրիտանական հավակնություններին։ Անգլիացի աստիճանավորները հասկանում էին, որ Եգիպտոսի կատարյալ տերերը կարող են մնալ այնքան ժամանակ, քանի դեռ եվրոպական վարկատուները գոհ կլինեն երկրի ֆինանսական դրությունից։ Հենց այդ նպատակով էլ Եգիպտոսի ռազմական գրավմանը դուգընթաց անգլիացիները ձեռնարկեցին երկրի ֆինանսական կառավարման հարցում իրենց գերակշռությունն ապահովող միջոցառումներ։ Կոյանդերի հետ զրույցի ժամանակ Բերինգն ուղղակի ասում էր. «Մենք լրիվ մեր ձեռքն ենք վերցրել երկրի ֆինանսները և հասարակական գործերի մինիստրությունը։ Վարչակառավարման այդ երկու բնագավառներում, որոնք մենք ամենից կարևորներն ենք համարում, մենք եգիպտացիներից ավելի ձեռնահաս ենք ու հենց դրա համար էլ վերցրեցինք մեր անմիջական կառավարման ներքո»[16]։ Իր հերթին լորդ Նորտբրուկը խոստովանում էր, որ Եգիպտոսի ֆինանսական կառավարման գծով անգլիական կառավարության բոլոր առաջարկությունների և վերափոխությունների արդյունքն «անկասկած պիտի

լինի միջազգային վերահսկողության փոխարինումը Անգլիայի ֆինանսական վերահսկողությամբ»[17]։

Սենթ-Ջեյմսի կառավարությունն այդ նպատակով 1884 թ. որպես ֆինանսների մինիստրության կից խորհրդական Եգիպտոս գործուղեց Էդգար Վինսենտին։ Վերջինս պետք է ինքնիշխան տնօրիներ վարչակառավարման ֆինանսական ամբողջ մարզը, ըստ որում նրա գլխավոր առաջադրանքը պիտի լիներ աշխատել կանխելու բյուջեի ամեն մի դեֆիցիտ, որը կարող էր հանգեցնել անգլիացիների համար անցանկալի արդյունքի՝ Միջազգային ստուգող հանձնաժողովի գումարման։

Ձգտելով ավելացնել պետական գանձատան հասույթները, Վինսենտը պնդեց հաստատել նոր հարկեր։ 1888 թ. ծխախոտի մշակության հատկացվող հողակտորներն ենթարկվեցին նոր հարկի՝ ֆեդանից նախկին 2,5 եգիպտական ֆունտի փոխարեն 30 ֆունտի չափով։ Բարձրացվեցին նաև երկաթուղային սակերը, փոխադրվող ծխախոտի մաքսը և Նեղոսով նավարկության տուրքը[18]։

Օրըստօրե ծանրացող հարկերը լրիվ քայքայման մատնեցին եգիպտացի գյուղացիներին՝ ֆելլահներին։ «Հարկագանձման եղանակը հիշեցնում է խդիվ Իսմայիլի հոռեգույն ժամանակները,—գրել է Կոյանդերը։—Գանձատունը բռնագրավում և համարյա ձրի վաճառում է դեռ չհնձված բերքը, դրանով վերջնականապես քայքայելով հողամշակների բարեկեցությունը։ Եգիպտոսում հողը երբևէ այնքան պարտքերով ծանրաբեռնված չի եղել, ինչպես այժմ... և ներկա վարչակարգի ներքո երկիրը բավականին արագաքայլ դեպի քայքայում է գնում»[19]։

Վինսենտի վարած քաղաքականության հետևանքով բացն ու պակասորդը, որոնցով Եգիպտոսը մինչ այդ տառապում էր, 1886 թ. արդեն անհետացել էին պետական բյուջեի հաշվեցուցակներից[20]։

Հոգալով միայն այն մասին, որ պետական բյուջեի տարեկան հաշվեցուցակներում պակասորդի բացակայությամբ «Եվրոպայի աչքին փոշի փչվի»[21], անգլիացիները Պարտքերի վարչության քննիչներին հնարավորություն չէին տալիս գործերի իսկական վիճակին հաղորդվել այն նահանգներում, որոնց հասույթներն ուղղակի գանձատուն էին մուտքագրվում և ապահովում պետական պարտքերի տոկոսների վճարումը։ Պարտքերի լիկվիդացման օրենքը Պարտքերի վարչությանը իրավունք չէր տալիս վերահսկել գավառներում եգիպտական կառավարության գործողություններն ու դրանով իսկ դուռ էր բաց անում տարբեր չարաշահությունների առաջ։ Վարչության ռուս լիազոր-քննիչ իշխան Մու-

ռուզիի առաջարկությունը՝ վարկատուների շահերն ապահովող հասույթների գլխավոր աղբյուր չորս նահանգներում վերահսկողություն սահմանել կառավարության գործողությունների վրա, չարժանացավ եվրոպական մյուս տերությունների լիազոր-քննիչների պաշտպանությանը[22]։ Այդ տերությունների կառավարող շրջանները նախընտրեցին բավարարվել Եգիպտոսի ֆինանսների վերաբերյալ անգլիացի խորհրդականի կողմից հանուր հասարակության ի գիտություն պատրաստվող և հրապարակվող փայլուն հաշվետվություններով, հոգ չտանելով այն մասին, որ այդ հաշվետվություններն ինչքանո՞վ էին համապատասխանում երկրի տնտեսական իրավիճակին և խորամուխ չլինելով այն իսկական հնարքներին, որոնք տեղական կառավարությանը թույլ էին տալիս տարեկան բյուջեն ելքի ու մուտքի մարզերում հավասարակշռել։

1886 թ. անգլիական ֆինանսական խորհրդատուն Պարտքերի վարչության համաձայնությունն ստացավ այն հարցում, որ ինչպես արտադրական պարհակների՝ վարձու աշխատանքով փոխարինման, այնպես էլ նավթային աղբյուրների որոնման և այլ համանման գործերի համար ծախսումներն օրինական ճանաչվեն, հակառակ այն իրողության, որ դրանք կատարվել էին առանց կանխօրոք տերությունների հավանության ենթարկվելու[23]։ Նմանօրինակ որոշումները բացահայտորեն դեմընթաց էին Պարտքերի վարչության կանոնագրությանը, որի հիմամբ եգիպտական ֆինանսիստներին չէր թույլատրվում իրենց հայեցողությամբ տնօրինել ընթացիկ տարվա հասույթները, այն էլ՝ առանց տերությունների համաձայնությունը կանխապես ստանալու։

Անգլիացիների պնդումով Պարտքերի վարչությունը մերժեց ֆրանսիացի քննիչի առաջարկությունը, որի համաձայն վարչության անդամները պետք է վերահսկողություն սահմանեին եգիպտական կառավարության կողմից հասարակական աշխատանքների համար նախատեսված գումարների, ինչպես նաև Սուեզի ջրանցքի մաքրման համար հատկացված 250 հազար եգիպտական ֆունտի ծախսումների վրա[24]։

Այս բոլոր փոփոխությունների և որոշումների նպատակն էր թուլացնել Պարտքերի վարչության ազդեցությունը որպես Եգիպտոսի ֆինանսների վերահսկողության ենթարկող միջազգային հաստատության։ Անգլիացիները հնարավորություն ստացան առանց հակակշռի տնօրինել Պարտքերի վարչության գանձարկղ մուտքագրվող գումարները։

Ռոտշտեյնը ճիշտ է նկատել, որ 1886 թ. արդեն «արշավ սկսվեց քննիչներին ամբողջովին ճանապարհից վերացնելու համար»։ Սըր Հենրի Դրումմոնդ-Վուլֆը հայտարարեց, որ «Պարտքերի վարչությունը բոլորովին հակընդդեմ է գործում ֆինանսական խորհրդականից ուղղություն ստացող կառավարության ֆինանսական քաղաքականությանը։ Պարզ է, որ անհրաժեշտ է վերանայել այն հարցը, թե ինչքա՞ն նպատակահարմար է այդպիսի լիազորություններ տալ օտարերկրացիների մի խմբի...»[26]։ Իսկ 1890 թ. դեկտեմբերին Ալեքսանդրիայում լույս տեսնող և ոչ առանց հիմքի Եգիպտոսի իսկական կառավարողների խոսնակը համարվող «Դի էշիպշըն գազետում» հրապարակվեց մի հոդված, որ ուղղված էր ընդհանրապես Պարտքերի վարչության գոյության ու գործունեության դեմ[27]։

Մեծ տերությունների գրաված դիրքը բնավ էլ չխանգարեց անգլիացիների հետագա գործողություններին։ Քանի զեռ գոյատևում էր Ռուսաստանի համաձայնությունը Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հետ, այդ տերությունների ներկայացուցիչները Պարտքերի վարչության գործունեության միջոցով ընդհուպ մինչև 1887 թ. հակազդում էին Եգիպտոսում Անգլիայի հարաճող ազդեցությանը։ Եռյակ միության ստեղծմամբ իրավիճակը փոփոխվեց։ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչները եգիպտական հարցերի նկատմամբ չեզոք դիրք գրավեցին, բավարարվելով իրենց փոխատվությունների տոկոսները կանոնավորաբար ստանալով։ Ավստրո-Հունգարիայի դիվանագիտական ներկայացուցիչն իր ֆրանսիական պաշտոնակցին հայտնում էր, որ իր կառավարությունն իրեն կարգադրել է չբարձրացնել այնպիսի հարցեր, որոնք կարող են տհաճ լինել Անգլիային և որ իրեն հրահանգված է գործել միայն ու միայն Լոնդոնի ներկայացուցչի հետ համախորհուրդ[28]։ Իսկ Պարտքերի վարչությունում Գերմանիայի լիազոր բարոն Ռիխտգոֆենը իշխան Մուրուզիի այն դիտողությանը, որ վարչության նշանակությունն օրըստօրե ընկնում է, պատասխանում էր. «Ի՞նչ անել, երբ կարգադրություն ունես թիկունք տալ անգլիացիներին. անհրաժեշտ է բառացիորեն հետևել կարգադրությանը»[29]։

Միջերկրական ծովի շրջանում ստատուս քվոն պահպանելու վերաբերյալ համաձայնության հիմամբ միջերկրածովյան ափերին վերաբերող բոլոր հարցերում Իտալիան, եռյակ միության երրորդ անդամը, նույնպես թիկունք էր տալիս Անգլիային։

Վարչությունում Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչները, բախվելով իրենց ձայնը Անգլիայի բոլոր առաջարկությունների օգտին տվող մյուս չորս տերությունների ներկայացուցիչների մեծամասնական խմբին և ուրեմն չկարողանալով ոչինչ անել՝ հարկադրվում էին միանալ ընդհանուր կարծիքին։

Այսպիսով, Եգիպտոսում իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով անգլիական իշխանություններին հաջողվեց հաղթահարել եվրոպական տերությունների հակադրեցությունը՝ երկրում գոյություն ունեցող միջազգային հաստատությունների իրավունքները սահմանափակելու և ներգործությունը թուլացնելու, նրանց կազմում անգլիացի աստիճանավորներ տեղադրելու և դրանով իսկ այդ վարչություններն իր ազդեցությանը ենթարկելու ճանապարհով։

Արդեն 1880-ական թթ. վերջին Անգլիային հաջողվեց ոչ միայն ամրապնդել իր դիրքերը Եգիպտոսում, այլև անգլիական և ընդհանրապես եվրոպական հասարակական կարծիքը նախապատրաստել այն մտքին, որ Նեղոսի գրավումը երկարատև է լինելու։

С. А. АРУТЮНЯН

УКРЕПЛЕНИЕ АНГЛИЙСКОГО ГОСПОДСТВА В ЕГИПТЕ В 80-ых ГОДАХ XIX ВЕКА

Резюме

В 1882 году британские войска оккупировали Египет. В целях укрепления своих позиций и установления неограниченного господства Англии необходимо было преодолеть противодействие европейских держав, выражавшееся главным образом в деятельности существующих в Египте международных учреждений.

В статье сделана попытка показать, как путем ограничения прав этих учреждений, ослабления их влияния к концу 80-ых годов XIX века, англичанам удалось не только укрепить свои позиции, но и подготовить европейское общественное мнение к мысли о продолжении оккупации на длительное время.

1 Н. А. Иванов, История национально-освободительной борьбы народов Африки в новое время. М., 1976, с. 189.

2 Colvin A., The Making of Modern Egypt, L., 1906, p. 202.

3 Архив внешней политики России Историко-дипломатического управления Министерства иностранных дел СССР. Москва (այսուհետև՝ АВПР), ф. «Политархив», оп. 482, д. 825, л. 41, Кояндер-Гирсу. 9/IV. № 16.1887, Каир

4 АВПР. ф. «Политархив», оп. 482. д. 825. л. 61. Кояндер-Гирсу. 21/V. № 23. 1887, Каир.

5 АВПР. ф. «Политархив», оп. 482. д. 827. л. 96. Кояндер-Гирсу. 25/V. № 29. 1889. Каир.

6 АВПР. ф. «Политархив», оп. 482, д. 826. л. 99, Щеглов-Гирсу. 7/VII. № 31 1888, Каир.

7 Նույն տեղում, թ. 100։

8 АВПР, ф. «Политархив», д. 828. л. 30. Кояндер-Гирсу, 21/IV. II 11, 1890, Каир.

9 АВПР, ф. «Политархив», д. 829, л. 21, Кояндер-Гирсу. 11/II. № 10. 1891, Каир.

10 Նույն տեղում, թ. 23։

11 Նույն տեղում, թ. 27։

12 Նույն տեղում, թ. 30։

13 АВПР, ф. «Политархив», д. 828, л. 78, Кояндер-Гирсу. 1/V. № 17, 1890 Каир.

14 АВПР, ф. «Политархив». д. 829, л. 43, Кояндер-Гирсу, 18/II. № 13, 1891. Каир.

15 АВПР, ф. «Политархив», д. 829. л. 133. Кояндер-Гирсу. 18/VII. № 33. 1891. Каир.

16 АВПР, ф. «Политархив», оп. 482, д. 826, л. 82, Кояндер-Гирсу, 4/VI. № 25, 1887, Каир.

17 Մեջբերում ըստ՝ Ротштейн Ф. А. Захват и закабаление Египта. М.—Л. 959. с. 215.

18 АВПР, ф. «Политархив», оп. 482, д. 827, л. 145, Кояндер-Гирсу, 24/IX7, № 49. 1889, Александрия.

19 АВПР, ф. «Политархив». оп 482, д. 827, л. 167, Кояндер-Гирсу, 14/XI. № 55, 1889, Каир.

20 АВПР, ф. «Политархив» оп. 482, д. 827, л. 150, Кояндер-Гирсу, 24/IX. № 49. 1889, Александрия

21 АВПР, «Политархив», оп. 482, д. 827, л. 191, Кояндер-Гирсу, 12/XII. № 16. 1889, Каир.

22 Նույն տեղում, թ. 196։

23 АВПР, ф. «Политархив», оп. 482, д. 825, л. 23. Кояндер-Гирсу, 5/III. № 11. 1887, Каир.

24 АВПР, ф «Политархив», оп. 482, д. 825, л. 27, Кояндер-Гирсу, 12/III. № 12. 1887, Каир.

25 Ф. А. Ротштейн, Захват и закабаление Египта, М.—Л., 1959, с. 220.

26 Մեջբերում ըստ՝ Յ. Ա. Ռոտշտեյնի նշված աշխատության, նույն տեղում, էջ 220։

27 АВПР, ф. «Политархив», д. 828. л. 199. Коядер-Гирсу, 25/XI. № 50, 1890, Каир.

28 АВПР, ф. «Политархив», д. 828, л. 42, Коядер-Гирсу, 21/IV. № 12, 1890, Каир.

29 Նույն տեղում։